

## Կ Ա Ր Ա Պ Ե Տ Մ Ե Լ Ի Ք - Օ Հ Ա Ն Ջ Ա Ն Յ Ա Ն

Վախճանվեց սովետահայ բանասիրության ավագ սերնդի ներկայացուցիչ, նշանավոր հայագետ, գիտության վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Կարապետ Աղաբեգի Մելիք-Օհանջանյանը:



Կարապետ Մելիք-Օհանջանյանը ծնվել է Մեղրու շրջանի Կալեր գյուղում 1893 թ. փետրվարի 20-ին (ն. տ. մարտի 4-ին): Նա սովորում է նախ Գանձակի տղայոց գիմնազիայում, ապա 1903 թ. ընդունվում է Մոսկվայի Հազարյան ճեմարան: 1914 թ. ճեմարանի պրոֆեսորական խորհրդի որոշմամբ գործուղվում է Գերմանիա՝ գերմաներենի մեջ խորամուխ լինելու և արևելագետ Սոսենի մոտ սանսկրիտ սովորելու նպատակով: 1920 թ. վերադառնում է Հայաստան և իր ողջ եռանդն ու կարողությունները ներդնում հայրենի երկրի գիտական ու մշակութային կյանքի վերելքին: Մինչև 1930-ական թթ. Կ. Մելիք-Օհանջանյանը զբաղվում է մանկավարժական-մեթոդական աշխատանքներով, դասախոսելով միաժամանակ Երևանի պետական համալսարանում: 1930 թ. նա աշխատում է ՀՍՍՀ գիտությունների ինստիտուտի գիտական քարտուղար, 1931-ին՝ նյութական կառավարության ինստիտուտի կազմակերպիչ-գլխավոր, հետագայում՝ գիտական քարտուղար, 1932 թ., նույն հաստատության

վերակազմությունից հետո՝ կուլտուրայի պատմության ինստիտուտի գիտական քարտուղար և հին գրականության ու ժողովրդական բանահյուսության սեկտորի վարիչ:

1935 թ. Կ. Մելիք-Օհանջանյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում, 1962 թ.՝ գիտության վաստակավոր գործիչ պատվանուն, իսկ 1965 թ. նա ընտրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Կ. Մելիք-Օհանջանյանի գիտական նախասիրությունները բազմազան են ու բազմաբնույթ՝ հայ ժողովրդական բանահյուսություն, հայ հին գրականություն, հայոց պատմություն, արևելագիտություն, համեմատական տեքստաբանություն, գիտական ու գրական-գեղարվեստական հոշարձանների թարգմանություն: Նրա գիտական շահագրգռությունների մեջ առաջնակարգ տեղ է զբաղում հայ հին ու նոր ժողովրդական վեպերի ուսումնասիրությունը: Հաշվի առնելով միջազգային ժողովրդական վիպագիտության փորձն ու արդյունքները, հետևելով Մ. Արեղյանի հիմնադրած հայ վիպական բանահյուսության պատմական տեսությանը, Կ. Մելիք-Օհանջանյանը նորովի է դիտում ու մեկնաբանում հայ միջնադարյան պատմիչների՝ Ազաթանգեղոսի, Բուղանդի, Խորենացու, Հովհան Մամիկոնյանի և ուրիշների պատմագրական երկերում պահպանված հայ հին ժողովրդական վեպերի հատվածները, վերականգնում վերջիններիս ամբողջությունը, բացատրում դրանց սոցիալական գաղափարախոսությունը և այլ ժողովուրդների վիպական ստեղծագործությունների հետ ունեցած հարաբերությունը: Նման գործերից են «Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուղանդի» ուսումնասիրությունը (1947 թ.), Գրիգոր Լուսավորչի վեպին նվիրված նրա մեծածավալ անտիպ հետազոտությունը, որի մի մասը՝ «Ազաթանգեղոսի բանահյուսական աղբյուրների հարցի շուրջը» խորագրով լույս տեսավ 1964 թ.:

1934 թ. գրած «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները Շահնամին»-ում և հայ մատենագրության մեջ՝ հետազոտությամբ վերհանելով ու արժեքավորելով Ֆիրդուսու կյանքն ու ժամանակաշրջանը, Կ. Մելիք-Օհանջանյանը հայ բանասիրության մեջ հատուկ քննության հարց է դարձնում իրանա-հայկական բանահյուսական ու դրական փոխառնությունները և դրանք մեկնաբանում կուլտուր-պատմական և գաղափարական ընդհանրություններով:

Տակավին 30-ական թթ. սկզբներին ղեկավարելով գիտական արշավախմբերը, Կ. Մելիք-

Յանջանյանը գյուղից-գյուղ անցնելով, գրի է առնում «Սասնա ծռերի» ութ նոր պատումներ, որոնք կուլտուր-պատմական անդուգական արժեք են ներկայացնում: Նույն թվականներին նա Մանուկ Աբեղյանի հետ միասին ձեռնարկում է «Սասնա ծռեր» վեպի գիտական հրատարակությանը: Արդյունքը «Սասնա ծռերի» երեք մեծագիր հատորներն են (1936, 1944, 1951 թթ.), որոնք այժմ հայ բանագիտության ծանրակշիռ հիմնաքարերն են դարձել: 1946 թ. Կ. Մելիք-Օհանջանյանը հրատարակում է «Միթրա-Միհրը Սասնա ծռերի մեջ» ուսումնասիրությունը, ուր շոշափվում էին մեր նոր ժողովրդական վեպի դիցարանական հիմքերը: Նա հեղինակն է նաև «Սասնա ծռերի» տասը ընտիր պատումների ուսերեն գիտական թարգմանության, որն ունի հարուստ ծանոթագրություններ, ընդարձակ ներածական հետազոտություն և շուտով լույս կը տեսնի Մոսկվայում:

Կ. Մելիք-Օհանջանյանը մեղանում առաջինն է հատուկ ուշադրություն դարձրել սովետական ժամանակներում ստեղծված ժողովրդական բանահյուսությանը և 1936 թ. հրատարակած «Լենինը հայ ֆուլկլորի մեջ» աշխատությամբ գիտականորեն հիմնավորել ու բացահայտել է մեր նոր բանահյուսության բնույթն ու առանձնահատկությունները:

Մելիք-Օհանջանյանի գիտական վաստակի մյուս կարևոր մասը հայ հին գրականության տարբեր խնդիրներին նվիրված հետազոտու-

թյուններն են: Դրանից են հայ միջնադարյան զեղարվեստական արձակի վերաբերյալ նրա ամփոփ հետազոտությունը («Էջեր հայ միջնադարյան զեղարվեստական արձակից» դրքի առաջաբանը, 1957 թ.) ու «Կորյունը և նրա «Վարք Մաշտոցին» ուսերեն ուսումնասիրությունը (1962 թ.), XIII դ. հայ նշանավոր պատմիչ Կիրակոս Բանձակեցու հայոց պատմության քննական-բաղդատական բնագրի գիտական հրատարակությունը (1962 թ.), կից արժեքավոր ուսումնասիրությամբ (նա Գանձակեցու պատմությունը թարգմանել է նաև ուսերեն, որ դեռևս անտիպ է) և «Պատմութիւն Փարէզի և Վիեննայի» միջնադարյան ասպետական վեպի հայկական տարբերակի քննական-համեմատական բնագիրը (1966 թ.), գիտական հարուստ ապարատով ու ներածական ուսումնասիրությամբ:

Իր ստեղծած գիտական արժեքավոր վաստակի հետ մեկտեղ պրոֆ. Մելիք-Օհանջանյանը նաև ուսուցիչ էր ու դաստիարակ: Իր ազնիվ, լայնախոհ ու մարդամոտ բնավորությամբ նա միշտ էլ սիրահոժար բավարարում էր բոլոր նրանց պահանջները, ովքեր խնդրում էին նրա խորհուրդը կամ օժանդակությունը: Նա սիրված գիտնական էր և ուսուցիչ, որի անհատականության մեջ խաչավորված էին մարդու, գիտնականի, քաղաքացու և հայրենասերի վեհ ու ազնիվ գծերը:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ԱՐՄԵՆԱԿ ՄՆՋՈՅԱՆ

Մեր հանրապետության գիտական հասարակայնությունը ծանր կորուստ կրեց: 1970 թ. փետրվարի 21-ին վախճանվեց սովետահայ ականավոր գիտնական-քիմիկոս, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արմենակ Լևոնի Մնջոյանը:

Ա. Լ. Մնջոյանի անվան հետ են կապված օրգանական միացությունների կառուցվածքի և նրանց կենսաբանական հատկությունների կապի սիստեմատիկ և նպատակասլաց ուսումնասիրությունները, որոնց շնորհիվ ստեղծվեցին երժկական պրակտիկայում արմատավորվեցին մի շարք բարձր արդյունավետ զեղամիջոցներ: Ա. Լ. Մնջոյանը փայլուն փորձարար էր, տաղանդավոր գիտնական ու կազմակերպիչ, ակտիվ գիտնական ղեկավար:

Ա. Լ. Մնջոյանը ծնվել է 1904 թ. Սարիղամիշում: 1928 թ. ավարտում է Մոսկվայի քի-

միա-զեղազործական ինստիտուտը, իսկ 1933 թ.՝ Երևանի բժշկական ինստիտուտը:

Ղեկավարելով Երևանի բժշկական ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի օրգանական քիմիայի ամբիոնները, Ա. Լ. Մնջոյանը, առաջին անգամ Հայաստանում, ՀՍՍՀ առողջապահության մինիստրության Գեղատնային վարչությունը կից կազմակերպում է մի շարք պրեպարատների արտադրությունը տեղական հումքից: Հայրենական մեծ պատերազմի տարիներին նրան հանձնարարվեց հատուկ քիմիական լաբորատորիայի ղեկավարումը, որտեղ ստեղծվեցին և արտադրության մեջ արմատավորվեցին ռազմա-սանիտարական նշանակություն ունեցող մի շարք զեղամիջոցներ:

1947 թ. Ա. Լ. Մնջոյանը նշանակվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի քիմիա-զեղազործական գիտահետազոտական լա-